ՏԵՂԵԿԱՏՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԼԻԱԶՈՐԻՆ ԴԻՄՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազգային Ժողովը, հիմնական իրավունքների պաշտպանության նպատակով, որպես բացառապես ազգային ժողովի առջեւ պատասխանատվություն կրող անձ, ընտրում է **հիմնական իրավունքների լիազորին** (ՀԻԼ):

Համաձայն 2011 թվականի **ՃԺԱ** (հարյուր տասնմեկ) (ՀԻԼ) օրենքի §18-ի, Հիմնական իրավունքների լիազորին կարող է դիմել ամեն ոք, ով իր կարծիքով որեւէ գերատեսչության,

օրինակ `

– վարչական մարմնի,

– տեղական ինքնավարության,

– ազգային ինքնավարության,

– պարտադիր անդամության հիմունքներով գործող հասարակական կազմակերպության ,

– Հունգարիայի Բանակի,

– կարգապահության մարմնի,

– վարչական իրավունքներով շնորհված այլ մարմնի տվյալ իրավունքներով,

– քննչական մարմնի կամ դատախազության հետաքննություն վարող մարմնի,

– նոտարի,

– դատական պալատի կատարածուի,

– դատարանի ինքնուրույն կատարածուի, կամ

– հասարակական ծառայություններ կատարող մարմնի

գործունեության կամ պարտականությունների զանցառության պատճառով, դիմող անձի հիմնական իրավունքները խախտվել են, կամ ստեղծվել է ուղակի, կամ անուղակի այդ իրավունքների խախտման վիճակ, նկատի առնելով, որ դիմողի վարչական միրմինների միջոցներով իրավունքների վերականգման հնարավորությունները (բացառությամբ վարչական մարմնի որոշման դատական

վերանայումը) սպառվել են, կամ վերանայման հնարավորությունը դիմողի համար չի ապահովված:

Որպես հասարակական ծառայություններ, անկախ իրենց կառուցվածքային կարգի, որակավորվում են հետեւյալ կազմակերպությունները՝

– պետական, կամ տեղական ինքնավարությունների առաջադրանքներ կատարող, կամ առաջադրանքների իրականացմանը միջնորդող մարմինը,

– կենցաղային ծառայությունները,

– համաընդհանուր ծառայությունները,

– պետական կամ եվրոպական միության կողմից տրամադրվող նպաստների յուրացմանը աջակցող եւ միջնորդող կազմակերպությունները

– օրենսդրությունում նշված հասարակական ծառայություններ մատուցող կազմակերպությունները

կամ

– օրենսդրությունով մատնանշված, պարտադիր հասարակական ծառայություններ մատուցող կազմակերպությունները :

Հասարակական ծառայություններ մատուցող մարմինը կարող է քննվել բացառապես գործունեության հետ կապված պարագայով:

Հիմնական իրավունքների լիազորը, իրավի է քննության առնել բնական անձանց առանձնապես մեծ խմբի հիմնական իրավունքների խիստ խախտման դեպքում իշխանության մարմին չհամարվող կազմակերպության անփությունը կամ գործունեությունը:

Հիմնական իրավունքների լիազորը բացի այդ տիրապետում է հետեւվյալ իրավունքներով՝

Նախաձեռնել Սահմանադրական դատարանում օգտագործվող իրավական կարգի եւ Հիմնական Օրենքի ներդաշնակության վերանայումը:

Հիմնական իրավունքների լիազորը, եւ իր տեղակալները (ապագա սերունդների շահերի պաշտպանությունով զբաղվող լիազորի տեղակալ եւ Հունգարիայի

տարածքում ապրող ազգությունների իրավունքների պաշտպանությունով զբաղվող լիազորի տեղակալ) ուշադրությամբ հսկում են ապագա սերունդների հետաքրքրությունների եւ Հունգարիայում ապրող ազգությունների իրավունքների իրականացումը:

Հիմնական Իրավունքների Լիազորը իրավի չէ քննել՝

– Ազգային Խորհրդարանը,

– Հանրապետության Նախագահին,

– Սահմանադրական Դատարանն,

– Պետական Վերահսկողական Գործակալությունը,

– Դատարանները,

– Դատախազության գործունեությունը, բացառությամբ դատախազության հետաքննություն վարող մարմինների:

Եթե լիազորին ուղված բողոքում ենթադրվող խախտումը, ի դեմ իշխանության մարմին չհամարվող կազմակերպության (բացառմամբ վերը նշված մարմինների) գործունեությունը կամ անփությունը խիստ խախտում է բնական անձանց առանձնապես մեծ խմբի հիմնական իրավունքները, հիմնական իրավունքների լիազորը կարող է բազառության կարգով նախաձեռնել քննության:

Լիազորը <u>չի կարող քննել</u>՝

- եթե բողոքվող հարցի կապակցությամբ ծնվել է վարչական որոշում եւ որի ուժի մեջ մտնելուց հետո անցել ավելին քան մեկ տարի;
- եթե գործի քննությունը սկսվել է 1989 թ. հոկտեմբերի 23-ից առաջ;
- եթե ի դեմ վարչական որոշումի սկսվել է դատական հետաքննություն, կամ արդեն գոյություն ունի ուժի մեջ մտած դատական որոշում;
- եթե բողոքողի ով լինելը հայտնի չէ, որի պատճառով հետաքննության վարումը անիմաստ է (հիմնական իրավունքների լիազորին ուղված բողոքը չի կարող հանգեցնել ի դեմ բողոքողի որեէ տուժ կամ վնաս):

Հիմնական Իրավունքների Լիազորը իրավի է , դիմումը <u>խոտորել</u>, եթե

- չի համապատասխանում վերնշված պահանջներին

կամ

- բացահայտ անհիմն է,

կամ

- կրկնօրինակում է նախորդ դիմումը եւ չի պարունակում որեւէ նոր փաստ, կամ լրացուցիչ տվյալներ

Հիմնական Իրավունքների Լիազորը իրավի է , դիմումը <u>խոտորել</u>, եթե այն

- անստորագիր է ուղարկվել,

կամ

- լիազորի կարծիքով դիմումում նշված խախտումը այնքան աննշան է, որ չի կարող քննության առարկա դառնալ :

Բողոքի ներկայացման կարգը `

Բողոքը եւ լիազորի քննությունը ազատված են պետական տուրքից: Քաղաքացիները կարող են ուղարկել բողոքները գրավոր փոստի միջոցով, կամ բանավոր՝ անձամբ ներկայանալով լիազորի գրասենյակում: Խնդրանքին նպատակահարմար է կցել գործի հետ կապված եւ հետաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները: Եթե ցանկանում եք դիմել հիմնական իրավունքների լիազորին, կամ որեւէ տեղակալին, կամ ուղակի գերատեսչությանը էլեկտրոնային փոստով, խնդրում ենք օգտվել

panasz@ajbh.hu

հասցեյով, որն ուղակի այդ նպատակով է բացված:

Հրավիրում ենք Ձեր ուշադրությունը, որ էլեկտրոնային փոստով (e-mail) ուղարկված բողոքների քննությունը կայանում է համաձայն ընդհանուր կարգի, իսկ պատասխանը հիմնականում ուղարկվում է սովորական

փոստային նամակով, որի պատճառով խնդրում ենք նշել Ձեր փոստային հասցեն: Հասցեի բացակայության դեպքում e-mail – ով ուղարկված բողոքներով չենք զբաղվում: Եթե բողոքողը ցանկություն է հայտնում իր ով լինելը չբացահայտել լիազորը պարտավոր է խնդրանքը գոհացնելու:

Փոստային հասցե՝ Հիմնական Իրավունքների Լիազորի Գրասենյակ

1387 Budapest Pf. 40.(1387 Բուդապեշտ, փոստարկղ 40.)

Այն դեպքում, եթե ցանկանում էք անձամբ հայտնել Ձեր բողոքը, պետք է նախապես համաձայնացնել ընդունելության պարագաները:

Ընդունելության գրանցվումը հնարավոր է 06-1-475-71-00 հեռախոսով, կամ էլեկտրոնային հերթագրում մեր ինտերնետային էջի միջոցով:

Բողոքների գրասենյակի աշխատանքային կարգը՝

երկուշաբթի:	09-16 ժամերի միջոցում, նախապես համաձայնացվածության դեպքում
	16-18 միչոցում
երեքշաբթի-հինգշաբթի:	09-16 միչոցում
ուրբաթ:	09-12 միչոցում

Գրասենյակի հասցեն: Budapest V. ker., Nádor u. 22. (Բուդապեշտ V. շրջան, Նադոր փ. 22.)

Կարեւոր է, նկատի առնել որ՝

- Հիմնական Իրավունքների Լիազորի հետաքննությանը չի վերաբերվում սահմանված 30 օրեկան գործընթացի ժամկետը:

- Հիմնական Իրավունքների Լիազորի հետաքննությունը անկախ է, եւ որոշումներ կայացնելիս ղեկավարվում է միայն համաձայն Սահմանադրության եւ օրենքների: Եթե Լիազորի հետաքննությունը եզրակացնում է, որ տեղի են ունեցել անձի սահմանադրական իրավունքների խախտումներ, ստեղծված վիճակի վերացման նպատակով առաջարկությամբ է դիմում գերատեսչությանը, կամ նրա վերադաս

մարմնին, հասցեագրելով հասարակական կամ օրենսդրական ատյաններին:

- Հիմնական Իրավունքների Լիազորին ուղված դիմումը չի կարող հանգեցնել ի դեմ բողոքողի որեէ տուժ կամ վնաս: